



Սյունյաց երկիր

ՀԻՆՉԱԲԹԻ, 1 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 39 (415)
www.syuniacyerkir.am

**Եթե Արքեպանը նոր
լիցիտյուն թույլ
սա, կհետեի մեր
ուժգին և ջախջախիչ
հակահարվածը...**

ԲՍԿՈ ՍԱՀՄԱՆ
29 հոկտեմբերի 2016թ.

Վարչապետ Կարեն Կարապետյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն աշխատանքային այցից առաջ Գորիսում հանդիպել է Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներին:

Կառավարության ղեկավարը նշել է, որ հանդիպման հիմնական նպատակն է քննարկել մարզի խնդիրներն ու զարգացման հեռանկարները: «Մենք բոլորս պետք է գիտակցենք մի պարզ ճշմարտություն. մեր երկիրը, մեր տունը, մեր թատրոնը, մեր գյուղը կառուցելու ենք մենք, միայն և միայն մենք, և չպետք է սպասենք, որ ինչ-որ մեկը գալու է, վիճակը լավանալու է, այդ ամենը կատարվելու է: Խոսելու ենք պարզ, բաց, անկեղծ և բացի առկա խնդիրները ներկայացնելուց, պետք է առաջարկել նաև լուծումներ, նշել, թե խնդրի լուծման որ մասն է մարզը վերցնելու իր վրա՝ հաշվի առնելով իր բոլոր ռեսուրսները, և ինչ է ակնկալվում կառավարությունից», - նշել է Կարեն Կարապետյանը:

Այնուհետև Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը ներկայացրել է մարզում տարբեր ոլորտներում նախատեսվող ծրագրերը և նշել, որ հիմնական ջանքերն ուղղված են լինելու մարզի համաչափ զարգացմանը:

« Ձեկուցվել է, որ արդեն իսկ մշակվել է Սյունիքի զարգացման ռազմավարությունը, որը միտված է կյանքի նոր որակ ապահովելուն:»

Այդ համատեքստում, նախատեսվում է առաջիկայում ստեղծել Սյունիքի զարգացման ներդրումային հիմնադրամ, որի նպատակն է լինելու տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրերի խթանումն ու աշխատատեղերի ստեղծումը:

« Առաջիկայում մարզի հինգ քաղաքներում ստեղծվելու են վթարավերականգնողական նոր ծառայություններ, որոնք կապահովեն նոր աշխատատեղեր:»

Աշխատանքներ են տարվում Կապանում ռետինե նյութերի վերամշակման և խողովակների արտադրության երկու գործարան հիմնելու համար:



ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «Մենք փարբերակ չունենք լավ երկիր չկառուցելու, բայց դրան պետք է մասնակցի յուրաքանչյուրը»

Լու համար, որոնք ես կապահովեմ մի քանի տասնյակ աշխատատեղեր: Մեկնարկել է «Ես ծնվել եմ Սյունիքում» ծրագիրը, որի նպատակն է օժանդակել արտերկրում տարբեր ոլորտներում հաջողությունների հասած սյունեցիներին հարազատ մարզում ծրագրեր իրականացնելու հարցում: Իրանական կողմի հետ ակտիվ բանակցություններ են տարվում մասնաբերի

և վերամշակված բրդի արտահանման ուղղությամբ: Նշվել է նաև, որ մարզպետարանին կից գործելու են հանրային և երիտասարդական խորհուրդներ, որոնք հնարավորություն կտան հանրությանը՝ ներկայացնել իրենց հուզող խնդիրներն ու առաջարկությունները:

էջ 2


Կիրառական «Սյունյաց երկիր» հապուկ համար՝ նվիրված Ամենայն հայոց գուսանին՝ ծննդյան 110-ամյակի կապակցությամբ

2017թ. ապրիլի 25-ին լրանում է Գուսան Աշոտի 110-ամյակը: Հորեյլանի առիթով կիրառական «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար (200 էջ, A4 չափսի, մասամբ՝ գունավոր, կավճապատ թուղթ, 1700 տպաքանակ):

Մեկնարկած նախապատրաստական աշխատանքներին մասնակցում են հանրապետության երաժշտական և հատկապես աշուղական արվեստի ամենաերեւելի դեմքերը, Գուսանի երգերի կատարողները, նրա արվեստի երկրպագուները, հանրապետության կոմպոզիտորների միությունը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, ժողովրդական երգերին առնչվող հեռուստածրագրերը, ժողովրդական երգի հանրաճանաչ համույթները, այդ թվում՝ «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը, ինչպես և ճանաչված գրականագետներ:

Այդ բոլորով հանդերձ, «Սյունյաց երկիր» խմբագրությունն ակնկալում է նրանց աջակցությունը, ովքեր ասելիք ունեն Գուսանի ստեղծագործական ժառանգության մասին և հուշեր ունեն մեծ արվեստագետի հետ կապված, ովքեր ի վիճակի են արդիական հայացք ձգել նրա բանաստեղծական ու երաժշտական աշխարհին, նրա ստեղծագործությունների լեզվին ու ոճին, ովքեր ունեն թեմային առնչվող լուսանկարներ, տեսանյութեր:

Անհրաժեշտ այդ նյութերը կուզենայինք խմբագրությունում ստանալ մինչև 2017թ. փետրվարի 1-ը:
Իսկ մինչ այդ երախտագիտություն ենք



հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցում են և կաջակցեն մեր նախաձեռնության իրագործմանը և կհամագործակցեն խմբագրության հետ՝ աշուղական արվեստի մեծ վարպետին, Սյունյաց աշխարհի անզուգական երգչին նվիրված թերթային համարն առավել ամբողջական, բազմակողմանի ու անթերի ներկայացնելու համար:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

էջ 4

Թալիշում պետք է ապրեն հայն ու հայերենը

Հոկտեմբերի 29-ին Թալիշում կանգնեցվեց խաչքար՝ ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների հիշատակը հավերժացնող

Հայոց Արցախի նշանավոր հոռետես Վանքի և նրա մերձակայքում գտնվող Թալիշ գյուղի մասին գիտեցիք վաղուց: Գիտեցիք, որ գյուղն այդպես կոչվեց Մելիք-Բեգլարյան Թալիշի անունով: Գիտեցիք, որ խամսայի մելիքություններից մեկը՝ Գյուլխատանի փառապանծ մելիքությունը, երբեմն կոչվել է նաև Թալիշ անունով՝ կենտրոն ունենալով այդ գյուղը: Գիտեցիք, որ 1990-ականների Արցախյան գոյամարտի ժամանակ գյուղի համար կենաց-մահու մարտեր են ընթացել թուրքադրբեջանական ելուզակների դեմ: Բայց եւ չէինք պատկերացնում, որ երբեւէ Թալիշը սյունեցիներին համար կդառնա նվիրագործված վայր, ուխտատեղի...

2016թ. ապրիլի 3-ն էր: Գորիսի Սուրբ Տաթևացու անվան հրապարակում անսովոր եռուզեռ էր: Այնտեղ էին հարյուրավոր կամավորականներ Մեղրուց, Քաջարանից, Կապանից, Սիսիանից, Գորիսից:

Այնտեղ էին ճակատ մեկնող տղաների հարազատներից ու մերձավորներից շատերը: Տեսնել էր պետք, թե ոգեւորության ու վճռականության ինչպիսի մթնոլորտ էր տիրում կամավորականների շարքերում: Բազմաթիվ տարեցներ, նույնիսկ կանայք, խնդրում էին թույլտվություն՝ ընդգրկվելու Սյունիքի կամավորականներից կազմավորվող գումարտակում:

Տպավորությունն այնպիսին էր, որ ոտքի է ելել ողջ Սյունիքը: Եվ դա բնական էր. չէ՞ որ Արցախը նորից վտանգի մեջ էր:

Օրվա ժամը 18-ն էր: Չյունախառն անձրեւի ներքո օրհնանքի և ողջերթի խոսքեր հնչեցին, որից հետո մեքենաների շարասյունը շարժվեց դեպի Ստեփանակերտ, որտեղից էլ պիտի մեկնեին նշանակման վայրեր...

Ենթադրում էինք, որ տղաների կյանքը կարող է եւ վտանգվել. չէ՞ որ պատերազմ է: Բայց չէինք պատկերացնում, որ նրանցից տասը հոգի գոհասեղանին կդրվի ընդամենը ժամեր անց:

Եվ պատահարը տեղի ունեցավ: Տեղի ունեցավ ապրիլի 4-ին Թալիշ գյուղի սկզբնամասում գտնվող մեծավոր շենքի բակում, որտեղ մինչև այսօր էլ պահպանվում են ողբերգական միջադեպը հիշեցնող հետքեր, իրեր...

Ապրիլի 4-ի ողբերգությանը հաջորդած վեց-յոթ ամիսներին երազում էինք լինել սրբագործված այդ վայրում՝ Թալիշում, այնտեղ հավերժացված տեսնել մեր նահատակ ընկերների հիշատակը: Երազում էինք խոնարհվել այդ հողի վրա, ամուն առ ամուն հիշել Սյունյաց աշխարհի նորոքյա նահատակների անունները...

Եվ ահա հոկտեմբերի 29-ին Թալիշում ենք՝ պատահարի վայրում: Մեր հիշողության մեջ վերակենդանանում են այդ քաջերի կերպար-



Անցկացվեց վերջին՝ չորրորդ հանրային լսումը (քննարկումը)

Նոյեմբերի 28-ին «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում տեղի ունեցավ հանրային լսում, որ վերաբերում էր Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխությանը (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլտվության ժամկետի երկարացում) նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը և փորձաքննական գործընթացին: Սա թվով չորրորդ վերջին լսումն էր, որին մասնակցում էին «ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ Կարինե Մովսիսյանը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կազմած «Ակունք ֆիրմա» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթյան Նիկողոսյանը, «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Միհր Պոլոսկովը, ազդակիր ինը հա-

մայնքի ղեկավարներ, կոմբինատի տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կարինե Մովսիսյանը նշեց, որ այս քննարկման ընթացքում ակնկալվում են շահագրգիռ կազմակերպություններից, հանրությունից ստանալ առաջարկություններ, դիտողություններ, որոնք հաշվի կառնվեն փորձագիտական կենտրոնի կողմից տրամադրվող փորձագիտական եզրակացություններում:

«Ձանգեզուրի ՊՍԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Միհր Պոլոսկովը, ողջունելով քննարկման մասնակիցներին, նկատեց, որ դա մի հնարավորություն է ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ շփումն ավելի արդյունավետ ձևավորելու համար, նաև հնարավորություն է ներկայացնելու կոմբինատի ռազմավարական զարգացման ուղղությունը, եւ ինչը ոչ պակաս կարեւոր է, թե ինչ հարցեր են հետաքրքրում հանրությանն ու ազդակիր համայնքների ղեկավարներին:

Դավիթյան Նիկողոսյանի փոխանցմամբ՝ մինչեւ նախագծի

աշխատանքները սկսելը՝ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ՝ ռեգիոնալ երկրաբանական, հիդրոերկրաբանական: Հողի մոնիտաժում է արվել հարստացուցիչ ֆաբրիկայի, լցակայանի, պոչամբարի տարածքներից, կատարվել է հողերի անալիզ, իրականացվել են կենդանական ու բուսական աշխարհի ուսումնասիրություններ կոմբինատի հարակից տարածքներից:

Ընդհանուր առմամբ բաց հանքի արտադրության ընդլայնումն արվելու է բաց հանքի խորության հաշվին՝ տարեկան 15 մետր, լեռնային հանքի մակերեսը կավելանա 50 հեկտարով: Ընդհանուր առմամբ հաստատված է 2 մլրդ 244 մլն տոննա հանքաքար, որից քննարկման առարկա նախագծով նախատեսվում է արդյունահանել 547 մլն 875 հազար տոննա հանքաքար: Տարեկան 22 մլն արդյունահանման դեպքում կոմբինատը կգործի եւս 25 տարի ու 1 մլրդ 696 տոննա հանքաքար կմնա ընդերքում: Ինչ վերաբերում է Արծվանիկի պոչամբարին, որտեղ կուտակված են

212 մլն խորանարդ մետր պոչեթ, դրա տարողունակությունը 325 մլն խորանարդ մետր է, եւ դեռեւս տասը տարի կծառայի նպատակին: Բանախոսը նշեց, որ դրանից հետո կան խնդիր կորվի բարձրացնել պոչամբարի պատնեշը, կան նոր պոչամբար ստեղծելու անհրաժեշտություն կառաջադրվի:

Կոմբինատի արտադրության ընդլայնումը շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կմեծացնի մոտ 1,5 անգամ, սակայն կմնա պահանջվող նորմերի սահմաններում: Այդ առումով արդեն իսկ աշխատանքներ են տարվում. մասնավորապես, տեղադրվել են նոր աղացներ, ինչը կրճատել է փոշու արտանետման ծավալները:

Պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման ծավալների ընդլայնմանը զուգահեռ կակտիվանա ընկերության սոցիալական քաղաքականությունը, ինչի վերաբերյալ խոսք ասաց «Ձանգեզուրի ՊՍԿ» ՓԲԸ վարչական ղեկարտամենտի ղեկավար Զարուհի Տոնապետյանը:

Բնապահպանությամբ մտահոգ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց հարցադրումները ներկայացրին օրվա բանախոսներին:

– **Ինձ թվում է, որ մեր այսօրվա քննարկումը չի եզրափակելու շփումներն ազդակիր համայնքների ղեկավարների հետ,** – միջոցառման ավարտին ասաց Միհր Պոլոսկովը, – **համոզված եմ, որ նկատել եք, թե կոմբինատի գործունեության մեջ դրական դիմամիկա կա, որ այսուհետ շարունակվելու է:**

Գլխավոր տնօրենը նաև հավելեց, որ պարտադիր չէ, որ կոմբինատի հետ շփումները լինեն հանրային լսումների տեսքով, կոմբինատի տնօրենությունը կծգտի կազմակերպել հանդիպումներ, ձեւավորել աշխատանքային խմբեր, ինչն ձեռնարկության աշխատանքն ավելի տեսանելի լինի:

Հանրային լսումը վարող Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը վերջում շնորհակալություն հայտնեց կոմբինատի ղեկավարությանը՝ եզրափակելի լսումը պատշաճ կազմակերպելու համար:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Կարեն Կարապետյան. «Մենք փարբերակ չունենք լավ երկիր չկառուցելու, բայց դրան պետք է մասնակցի յուրաքանչյուրը»

Այնուհետեւ անդրաբարձ է կատարվել Սյունիքի մարզում կրթության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ ոլորտներում առկա խնդիրներին: Վարչապետ Կարապետյանը, հատկանշելով կրթության ոլորտի կարեւորությունը, շեշտել է, որ կրթական համակարգը պետության համար առաջնային է, եւ մեր վաղվա երկիրը պետք է լինի գրագետ մարդու երկիր: Կառավարության ղեկավարը կարեւորել է խնդիրների ախտորոշումը եւ ավելացրել. «Առարկայական խոսելու համար պետք է հստակ ախտորոշենք, թե ինչպիսի խնդիր կա, ինչպես պետք է ծախսերը նվազեցնենք, արդյոք կարող ենք լրացուցիչ ակտիվների հաշվին հոգալ խնդիրները, որ մասն է իր վրա վերցնելու համայնքը, որը մարզպետարանը եւ որը պետական բյուջեն: Երբ այս համատեքստում խոսենք, քայլ առ քայլ գնալու ենք առաջ: Երբ խնդիրն անորոշ է, դա լուծելու ճանապարհն էլ է անորոշ»:

Խոսելով գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ՝ վարչապետը նշել է, որ պետությունը պետք է օգնի հաջողակ եւ ներուժ ունեցող ֆերմերներին, որպեսզի մյուսները, տեսնելով այդ ամենը, փորձեն հասնել նրանց: «Մեր առաջին փորձն աշխատատեղն է, առաջին փորձն աշխատող մարդուն օգնելը», – ընդգծել է կառավարության ղեկավարը:

|| Կարեն Կարապետյանը շեշտել է, որ այսօր Սյունիքի մարզի համայնքների գործընկերների հետ հանդիպմամբ ձեւավորվում է մարզպետարանների հետ աշխատելու ֆորմատը:

Ձեռնարկությունը ձեռք է մեկնում դպրոցին

2012-ից ի վեր Կապանի լեռնահարստացման կոմբինատը (մինչեւ այդ՝ «Դանդի խնդիւս մեթալս քոմբինատ» ՓԲԸ) մշտապես աջակցել է Գեղամուշի միջնակարգ դպրոցին եւ գյուղին՝ որպես ազդակիր համայնք: Դեռեւս 2012-ին սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով վերանորոգվել էր դպրոցի մարզադահլիճը, բայց մարզագույքի խնդիր կար, որ լուծվեց կոմբինատի միջոցներով: Վերջին չորս տարվա ընթացքում ձեռնարկության օժանդակությամբ (չինանյութի եւ գույքի ձեւով) վերջնական տեսքի եկավ դպրոցի ուսումնական գեմքի պահպանման սենյակը, վերանորոգվեց դահլիճի բեմահարթակը, արհեստանոցի մի մասում կոմբինատի տրամադրած շինանյութով կառուցվեց խոհանոց, որի շնորհիվ կրթօջախի տարրական դասարանների 15 դպրոցական օրական մեկ անգամ անվճար ստանում է տաք սնունդ, բարեկարգ տեսք ունեցավ նաև ուսուցչանոցը:

Այս տարում կոմբինատի ղեկավարությունը համայնքի եւ կրթօ-

ջախի համար լուծեց հրատապ հարցերից մեկը՝ ուղեւորափոխադրումների խնդիրը (Գեղամուշը մարզկենտրոնից հեռու է վեց կիլոմետր, համայնքն ունի 350 բնակիչ, դպրոց է հանախում 51 երեխա): «Այսօր օրական երկու անգամ ավտոբուսն անվճար ուղեթի է կատարում, որից օգտվում են եւ համայնքի բնակիչները, եւ մանկավարժները, եւ դպրոցականները, ինչի համար երախտագիտություն ենք հայտնում կոմբինատի տնօրենությանը, քանզի եղել են դեպքեր, երբ գյուղացին փոխադրամիջոց չլինելու պատճառով հնարավորություն չի ունեցել նույնիսկ այցելել բժշկի», – տեղեկացնում է Գեղամուշի համայնքապետ Իվան Կոստանդյանը:

Նոյեմբերի 23-ին Կապանի լեռնահարստացման կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը, տնօրենի տեղակալ Վահրամ Ավագյանը դպրոցում անցկացվող տասնօրյակի շրջանակում այցելեցին կրթօջախ, որի տնօրեն Գայանե Գրիգորյանը ներկայացրեց



Գեղամուշի դպրոցի պատմությունը, անցած ուղին (կրթօջախը 115 տարեկան է), նրանում կատարված փոփոխությունները: Մարզադահլիճում հյուրերը դպրոցին հանձնեցին մարզագույք (ներքնակներ, գնդակներ, ցանցեր, ցատկապարաններ), ինչն անհրաժեշտ էր դպրոցականների մարմնակրթության գործը պատշաճ կազմակերպելու համար:

Կրթօջախի դահլիճում դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համադրությով, մինչ այդ էկրանին ներկայացվեց հայռուսական համագործակցությունը ռազմատնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում: Միջոցառման

ավարտին կրթօջախի տնօրեն Գայանե Գրիգորյանը պատվոգիր հանձնեց կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովին՝ դպրոցին մշտական աջակցության համար:

«Ներկայումս ընկերությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակում է 2017 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, որտեղ կնախանշվեն կոնկրետ միջոցառումներ, թե կրթօջախում ինչ-ինչ խնդիրներ ծագեն, կծագենք անհրաժեշտ օգնություն ցույց տալ», – հրաժեշտից առաջ ասաց Դմիտրի Ուշկովը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գործադիրի ղեկավարի խոսքով՝ անհրաժեշտ է գնահատել առկա ներուժը, ներկայացնել տարբեր նախաձեռնություններ, ծրագրեր, եւ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը՝ պետությունն առաջնային կերպով օժանդակություն է ցուցաբերելու տվյալ ծրագրերի իրականացմանը: «Եթե դուք չեք պատկերացնում ինչ քաղաք, ինչ համայնք եք ցանկանում, դուք տարբերակ չունեք նպատակներին հասնելու: Վստահ եղեք, որ մենք ոչ թե շանս ունենք, այլ մենք տարբերակ չունենք լավ երկիր չկառուցելու: Բայց դրանում յուրաքանչյուրս պետք է մասնակցի, յուրաքանչյուրս իր մասնաբաժինը պետք է վերցնի, իր քաղաքացիական դիրքորոշումը ձեւավորի», – շեշտել է վարչապետը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև մարզի համայնքներում ճանապարհաշինությանը, գազամատակարարմանը, ջրամատակարարմանը, ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր:

4 Նոյեմբերի 2016թ. gov.am

Առողջապահություն



ԼՈՒՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «Բացառվում է, որ վճարունակ չլինելու պատճառով մեր հիվանդանոցից, առանց բուժառայություն ստանալու, հիվանդը դուրս գա»

ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի N1052-Ն որոշմամբ՝ «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը եւ «Ազարակի հիվանդանոց» ՓԲ ընկերությունը միաձուլման ձեռով վերակազմակերպվել են՝ ստեղծելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն: Տարիներ առաջ ընդունված որոշումը տարակարծությունների առիթ տվեց շատերին, բայց արդեն մի քանի ամիս է, ինչ ժամանակակից պահանջներին համապատասխան նորակառույց շենքը շահագործվում է՝ սպասարկելով Մեղրու ողջ տարածաշրջանի բնակչությանը:



«Որպես շինարարական կառույց՝ կատարյալ է, բայց նախագծային առումով որոշ թերություններ կան: Աշխատանքներն իրականացրած «Մեղրու ՇՇԸ» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը հավաստիացրել է, որ նույնիսկ մեկ տարվա երաշխիքի ժամկետը սպառվելուց հետո պատրաստ են առաջացած շինարարական խնդիրները լուծել:», – նշեց «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Լուսինե Վարդանյանը:

Լուսինե Վարդանյանը շենքերից ներկայիս բժշկական կենտրոնի հաշվեկշռում չնչին մասն է պահպանվել: «Միայն որոշ սենյակներ հետազայում հավանաբար կդարձնենք հրավիրյալ բժիշկների համար կացարաններ, այսօր էլ Մեղրու նախկին պոլիկլինիկայի երկու սենյակ այդ նպատակին է ծառայում», – նշեց Լ. Վարդանյանը:

Ֆիվանդանոցի՝ դեռես չլուծված հարցերից է նոր դիախեռումների կառուցումը: Սույն թվականի փետրվարի 6-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցի ժամանակ այս հարցը եւս բարձրացվեց, եւ խոստացան լուծում տալ: Տնօրենի խոսքերով՝ դիախեռումների կառուցման կապակցությամբ դեռես մարտ ամսին տարածաշրջանի համայնքապետարանների կողմից նախագծային որոշ աշխատանքներ կատարվեցին, բայց «ապրիլյան պատերազմի պատճառով աշխատանքներն ընթացք չստացան»: Լուսինե Վար-

դանյանը լիազորված է, որ այդ հարցն անպայման լուծում կստանա, կկառուցվի ժամանակակից պահանջներին համապատասխան շենք: Մինչ այդ հիվանդանոցը շարունակում է օգտագործել հին դիախեռմանը:

Սերժանը բուժկենտրոնում սպասարկվում են նաեւ մեծ թվով գինձառայողներ եւ նրանց ընտանիքի անդամներ, ինչպես հայկական զորամասի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության սահմանափակ զորքերի: Վերջին մեկ ամսում գինձառայողի վիրավորվելու երկու ծանր դեպք են ունեցել: Նրանց երկուսին էլ վիրահատել են կենտրոնի վիրաբույժներ Արմեն Օհանջանյանն ու Սիեր Աբրահամյանը, որից հետո հիվանդները տեղափոխվել են ՊՆ Երեւանի հոսպիտալ:

Ի սկզբանե տարակարծությունների տեղիք տված հիվանդանոցների միավորումը Լուսինե Վարդանյանն արդյունավետ է համարում. «Եթե Ազարակ, Մեղրի քաղաքներից յուրաքանչյուրի բնակչությունը 15-20 հազար լիներ, միգրացիոն օպտիմալացումը չարդարացվեր, բայց արդեն խոշորացված Մեղրի համայնքն ունի ընդամենը 12 հազար բնակիչ, եւ մեր բժշկական կենտրոնը կարողանում է լիարժեք բուժապասարկում իրականացնել: Բոլոր ծառայությունները մեկ վայրում կենտրոնացնելը հօգուտ հիվանդի է, քանի որ նա ստիպված չի մեկնում Մեղրի կամ Ազարակ այս կամ այն մասնագետին «գտնելու»»:

Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնն ունի 127 աշխատակից, որից 22-ը՝ բժիշկ: Ինչպես հավաստիացրեց տնօրենը, նեղ մասնագետների կարիք ունի կենտրոնը՝ ներգաղթյալներ, սոնոգրաֆիստ, ռենտգենոլոգ, բժիշկ-լաբորանտ, ուրոլոգ: «Լինելով համարապետության հարավային մասի ամենահեռավոր քաղաք՝ նախ մասնագետները դժվարությամբ են գալիս, երկրորդ՝ տարածաշրջանի բնակչության թվով պայմանավորված նեղ մասնագետները կես դրույքով են վճարվում», – նշեց տնօրենը եւ հավելեց, որ խնդիր ունեն նաեւ տեղացի կադրերով Մեղրու բժշկական կենտրոնը համալրելու: Պետության տրամադրած արտոնությունից (տարեկան երկու դիմորդի հնարավորություն է տրվում անվճար սովորել Երեւանի Միխիթար Յերացու անվան պետական բժշկական

համալսարանում) ամեն տարի տարածաշրջանի շրջանավարտներն օգտվում են, բայց միշտ չէ, որ նեղ մասնագիտացումներով կլինիկական օրդինատուրայում ընտրում են այն մասնագիտությունը, որի կարիքը Մեղրու բժշկական կենտրոնն ունի: Լ. Վարդանյանի տեղեկացմամբ՝ այս պահին կենտրոնում այդ ծրագրով ուսում ստացած շրջանավարտներից երեք բժիշկ է աշխատում: Վերջերս բուժկենտրոնը համալրվել է գաստրոէնտերոլոգով: Ի դեպ, երիտասարդ բժշկուհին մեղրեցի է, եւ, Լ. Վարդանյանի կարծիքով, կադրերի հիմնական համալրումը պետք է իրականացնել երիտասարդ, տեղացի բժիշկների հաշվին, ստեղծել գրավիչ պայմաններ նրանց աշխատանքի համար:

Ընդունված է՝ հատկապես շրջանային հիվանդանոցները հայտնի են լինում իրենց մասնագետներով: Բժշկուհուց հետաքրքրվեցինք, թե հատկապես որ բժիշկներն են իրենց մասնագիտական հմտություններով առանձնանում: Լ. Վարդանյանը նշեց, որ կենտրոնի բոլոր բժիշկներն էլ իրենց բնագավառում հմուտ են, միայն խնդիր այն է, որ առաջին նակարակի հիվանդանոցներում պետությունը թույլ չի տալիս իրականացնել մի շարք պլանային բժշկական միջամտություններ: «Եկել է ժամանակը, որ լիցենզավորվեն ոչ թե բժշկական կենտրոնները, այլ բժիշկները: Մարզի հիվանդանոցներում չաշխատելու պատճառներից մեկն էլ այն է, որ բժիշկներն իրենց մասնագիտական ողջ կարողությունները չեն օգտագործում: Առողջապահության նախարարությունում այդ հարցը, կարծես, քննարկման փուլում է: Դուսանք՝ իրավական որոշ նորմեր կվերանայվեն, ինչն ավելի կնպաստի տարածաշրջանային հիվանդանոցների գործունեության շրջանակների ընդլայնմանը», – նշեց Լ. Վարդանյանը: 2015թ. հունվարի 1-ից հանրապետությունում մեկնարկվել է սրտի անհետաձգելի բուժօգնության ծրագիրը, որի նպատակն է սուր ինֆարկտի ծանր դեպքերում, բժշկական համապատասխան ցուցումների առկայության պարագայում, կյանքեր փրկել ոչ դեղապատ մեկ ստենտ տեղադրելով: Տարածաշրջանից տարեկան 6-8 անձ օգտվում է այդ անվճար բուժօգնությունից: «Սա բավականին արդյունավետ ծրագիր է, եւ, ըստ վիճակագրական տվյալների, ծրագրի մեկնարկից հետո մեկ տարվա ընթացքում 1500 դեպք է հանրապետությունում գրանցվել, իսկ ինֆարկտից մահացության թիվը նվազել է տարեկան շուրջ 1000 դեպքով: Սուր ինֆարկտով դեպքեր ունենալիս անմիջապես կապ ենք հաստատում Գորիսի ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի հետ եւ համապատասխան ցուցումների դեպքում անմիջապես ուղեգրում Գորիս», – պարզաբանեց Լուսինե Վարդանյանը:

Տնօրենի հավաստմամբ՝ ավելացել է բնակչության դիմելիության մակարդակը թե՛ առաջնային (պոլիկլինիկա), թե՛ հիվանդանոցային օղակներ: Պետապատվերի շրջանակներում իրականացվող ծրագրերը հիմնականում գերակատարվում են: Իսկ վճարովի բուժում ստացող հիվանդները հաճախ ձգտում են ավելի վաղ դուրս գրվել եւ տանը շարունակել բուժումը՝ պայմանավորված անվճարունակությամբ: Բոլորիս հայտնի է, որ ավելի հեշտ է հիվանդությունը կանխարգելել, քան բուժել: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում եւ վերահսկում» ծրագրի նպատակն է արյան զերծնման, շաքարային դիաբետի եւ արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելումն ու վաղ ակտորոշումը, որն իրականացվում է ՊՆՊ թեսթի եւ արյան մեջ գլյու-

կոզայի որոշմամբ: Մեր հարցին, թե արդյոք շատ անձինք են օգտվել այս հնարավորությունից, տնօրենը պատասխանեց, որ գինեկոլոգների, նաեւ ընտանեկան բժիշկների միջոցով ձգտել են հնարավորինս շատերին «ստիպել» հանձնել ՊՆՊ քսուր եւ արյան անալիզ՝ գլյուկոզայի որոշման համար:

Ի դեպ, եռամյա ծրագրից յուրաքանչյուր ոք ընդամենը մեկ անգամ կարող է օգտվել:

«Առողջ մարդը մեզանում դժվարությամբ է բուժվում անցնում. շատեր նույնիսկ չեն օգտվում տարեկան մեկ անգամ անվճար բուժօգնության անցնելու հնարավորությունից: Հաճախ հիվանդանոց են գալիս միայն այն ժամանակ, երբ նրանց փաստաթուղթ է հարկավոր», – նշեց տնօրենը եւ հավելեց, որ գերակշռում են սրտանոթային հիվանդությունները, որին հաջորդում են ուռուցքային հիվանդություններն ու շաքարային դիաբետը:

Մտահոգիչ խնդիրներից է նաեւ տարեցտարի ծնելիության մակարդակի նվազումը, որ բոլոր տարածաշրջաններին է հատուկ: Առողջապահության նախարարության սահմանած չափորոշիչների համաձայն՝ հղիության ընթացքի նորմաների փորձ-իմջ շեղումն անմիջապես ուղեկցվում է մայրաքաղաք՝ Երևանի մակարդակի ծննդատուն: Հատկապես վերջին տարիներին այնքան են շատացել պատարագական վիճակները, որ շատ հղի կանանց են ուղարկում մայրաքաղաք՝ հնարավոր բարդություններից, վտանգներից խուսափելու համար:

Ինչ վերաբերում է բնակչության սոցիալական մակարդակին, ապա, տնօրենի հավաստմամբ, տարեցտարի այն նվազում է: Հաճախ է պատահում, որ հիվանդը վճարունակ չէ եւ ոչ մի սոցիալական կարգավիճակ չունի՝ պետապատվերի շրջանակներում բուժվելու համար, ստիպված գլխավոր բժշկին տրված հնարավորություն սահմաններում են փորձում այդ հարցը կարգավորել: «Բացառվում է, որ վճարունակ չլինելու պատճառով մեր հիվանդանոցից, առանց բուժառայություն ստանալու, հիվանդը դուրս գա», – հավաստիացրեց տնօրենը:

Բուժական խնդիրներից բացի՝ հիվանդանոցն ունի նաեւ տնտեսական որոշ խնդիրներ, որոնցից ամենաուրջը բյուջեն է: Եթե բյուջեն ավելանա, կկարողանան նաեւ հիվանդանոցային պայմաններում շատ հիվանդների սպասարկել, դրանից բժշկական կադրերով համալրել: Նախկինից մոտ երեք անգամ ավելի մեծ տարածք ունենալով հանդերձ՝ ֆինանսավորումը նույնն է մնացել: Կենտրոնացված ջեռուցման, սառեցման, օդափոխության համակարգեր են գործում, որոնց համար հսկայական միջոցներ են հարկավոր: «Իհարկե, շատ լավ է եվրոպական չափանիշներին համապատասխան հիվանդանոց ունենալը, բայց դրա պահպանման համար անհրաժեշտ է պետության աջակցությունը», – նշեց տնօրենը:

Քաջարանի հիվանդանոցում հայտնաբերված հեպատիտ C-ի վարակից հետո տարածաշրջանի բոլոր հիվանդանոցները մանրամասն ստուգվեցին: «Մեզ մոտ հիվանդները պարտադիր հանձնում են համապատասխան անալիզները՝ ներհիվանդանոցային վարակներից զերծ մնալու համար: Մեր հիվանդանոցում արձանագրված հիմնական թերությունները նախկին հիվանդանոցների շենքային պայմաններում էին, որի խնդիրը մեր մասնաշենքում թերությունները նախկին հիվանդանոցների շենքային պայմաններում հիմնականում լուծված է եւ համապատասխանեցված սանիտարահիգիենիկ պահանջներին», – եզրափակեց Լուսինե Վարդանյանը:

Թալիշում պերք է ապրեն հայն ու հայերենը

Հոկտեմբերի 29-ին Թալիշում կանգնեցվեց խաչքար՝ ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների հիշատակը հավերժացնող

Մերը՝ Մայիս երջանիկի Միրզոյան, Արմեն Մի-նասի Բեգլարյան, Սեդրակ Սերգեյի Ասրյան, Սերգեյ Գուրգենի Դանդյան, Դավիթ Բագրատի Սարգսյան, Եղիշե Արտավազի Նիկայան, Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան, Կարո Ծե-րունի Համբարձումյան, Արմեն Արե-գի Հովհաննիսյան, Գագիկ Կոլյայի Փարսադանյան:

Հարգանք եւ խոնարհում նրանց հիշատակին: Եվ, այդուհանդերձ, հոկտեմբերի 29-ի օրը տխրության, տրտմության, հառաչանքի ու ողբի օր էր Թալիշում:

Այդ օրը հպարտության, մխիթարության, փառաբանության, գլուխներս բարձր պահելու օր էր:

Եվ եթե ոմանց աչքերից անվերջ արցունքներ էին հոսում (հնարավոր էր չնկատել դա), ապա դրանք ավելի շատ Բարձրյալի կողմից առաքված անձրեւի պես էին, որով ոռոգվում էին մեր վշտացած սրտերը եւ, իհարկե, հայոց կենաց ծառը...

Այնպես որ՝ մեր նահատակ եղբայրների արյամբ շաղախված այդ հողը, այդ վայրն այսուհետ ուխտատեղի են լինելու ոչ միայն սյունեցիներին, այլև բոլոր նրանց համար, ովքեր հայոց Արցախի ազատությունն ու արժանապատվությունն ընդունում են իբրեւ բացարձակ ու անսակարելի արժեք:

* * *

...Մեր աչքի առաջ է նահատակ սյունեցիների հիշատակը հավերժացնող խաչքարը: Բայց դա սովորական սալաքար չէ՝ քանդակված խաչով, եւ ոչ էլ խաչ արտահայտող արձան: Դա մեր ինը նահատակի անունը սերունդներին պահ տվող քարե վկայագիր է, կենդանի եռություն: Դա Տիրոջ խաչն է՝ քարեղեն տեսքով, որին ապավինում ենք, ինչպես որ ապավինում ենք հայոց զինական ուժին. չէ՞ որ մեր կռիվը դեռ չի ավարտվել, եւ մարտեր ունենք դեռ տալու...

Խաչքարի հեղինակ վարագրատ Համբարձումյանի եւ Աշոտ Մինասյանի մտահղացումն էր, որ խաչքարը տեղադրվեց ոչ թե գյուղի մուտքում՝ ողբերգական պատահարի անմիջական վայրում, այլ գյուղի պանթեոնում:

Ըստ քանդակագործի՝ տուֆակերտ խաչքարի առանցքում ինը թուր է (Սիսական ջոկատի զոհված մարտիկների թիվն է): Խաչն ի վերջո դառնում է այդ թրերի ամբողջություն՝ թուր-խաչ, որ հպարտության, խրոխտության, հաղթանակի խորհրդանիշ է:

Խաչքարը, անշուշտ, կշահեր, ու ապրիլի 4-ի ողբերգական պատահարն առավել ամբողջական ու ճշմարիտ արտացոլված կլիներ, եթե 9-ի փոխարեն 10 տուր եւ նույնքան անուն-ազգանուն լինեին. կապանցի կամավորական Գագիկ Փարսադանյանի անվան բացակայությունը ողջամիտ վրիպակ չէ, ինչպիսի բա-

ցատրություն էլ որ տրվի: Ինչեւէ, քանդակագործը հավատում է, որ երբեւէ Թալիշ գյուղում կկանգնեցնի նաեւ վերադարձի, գյուղի հարության խաչքար. իսկ դա կլինի այն ժամանակ, երբ թալիշցիները կվերադառնան հայրենի օջախներ:

* * *

29 հոկտեմբերի 2016 թվական, ժամը 12: Սկսում է հանդիսավոր արարողությունը:

Նախ՝ զինվորական պատվո պահակախումբը դիմավորում է Լեռնային Դարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին, ով, ինչպես եւ ԼՂՀ ԱԺ ներկայացուցիչները, ԼՂՀ կառավարության անդամները, բարձրաստիճան զինվորականները, Սփյուռքից ժամանած հյուրերը եկել էին մասնակցելու խաչքարի բացմանը:

Թալիշ էին եկել ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը, Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանը:

Այնտեղ էին ԼՂՀ Մարտակերտի վարչական շրջանի ղեկավար, գեներալ-մայոր Վլադիկ Խաչատրյանը, Թալիշի գյուղապետ Վիլեն Պետրոսյանը, թալիշցիներ:

Եկել էին զոհված ազատամարտիկների հարազատներ ու մերձավորներ, Սիսական ջոկատի մարտիկներ, ապրիլյան պատերազմի մասնակիցներ, Սիսիանի տարածաշրջանի համայնքների ղեկավարներ, այդ թվում՝ Սիսիանի գործող քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը եւ համայնքի նորընտիր ղեկավար Արթուր Սարգսյանը:

Թալիշում էին Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի հոգևոր դասը՝ թեմի առաջնորդական տեղապահ Մակար Վարդապետ Հակոբյանի գլխավորությամբ, ինչպես եւ «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական անձնակազմը:

Առաջինը ելույթ ունեցավ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը:

Հուշարձանի բացման պատիվը տրվեց զոհված ազատամարտիկի մայր Եվգենյա Հովհաննիսյանին, որդի Արեգ Հովհաննիսյանին, թոռ Նարեկ Ալեքսանյանին եւ ապրիլյան պատերազմի մասնակից սերժանտ Վրեժ Բզնունուն:

Այնուհետեւ ելույթ ունեցան ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, սիսիանցի ազատամարտիկ Մարիետա Խաչատրյանը, ազատամարտիկի այրի Համեստ Մուրադյանը:

Օրինանքի խոսք ասաց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:

Ընթերցվեց ԼՂՀ պաշտպանության նախարար (ՊԲ հրամանատար), գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի հրամանը Սիսական ջոկատի զոհված ազատամարտիկներին, ջոկատի



մյուս մարտիկներին պատվոգրերով եւ նվերներով պարգևատրելու մասին:

Վերջում տեղի ունեցավ ծաղկադրում: Պսակներ դրվեցին նաեւ Արցախյան առաջին պատերազմում եւ Սեծ հայրենականում զոհված թալիշցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողներին:

* * *

Հաջորդեց ԼՂՀ պաշտպանության բանակի «Ապետ» համույթի ելույթը:

Ի դեպ, անհնար էր այցելել Թալիշ գյուղի պանթեոն եւ չհուզվել ու չհպարտանալ: Կոթողներից մեկի վրա Սեծ հայրենականում զոհված 222 թալիշցիների անուններն են, մյուսի վրա՝ Արցախյան պատերազմում զոհված 44 թալիշցիների դիմաքանդակները՝ մեծ մասը՝ երիտասարդ: Մեկ այլ հուշարձան էլ

մի կողմից թախծ է առաջացնում բոլորիս մեջ, մյուս կողմից՝ հպարտություն:

Երեկ երեկոյան ես ընդունեցի Սիսական ջոկատի զոհված մարտիկների հարազատներին: Եվ առաջին հարցս ուղղեցի վեց տարեկան Արեգին՝ ի՞նչ ես ամենից շատ սիրում: Պատասխանը հուզիչ էր՝ «Սիրում եմ իմ հայրիկին»: Հենց նրա արցունքներից էլ ծնվել է այս խաչքարը:

Ես խոնարհվում եմ նախ եւ առաջ հերոս զավակներ ծնած ծնողների առջև:

Համոզված եղեք՝ նրանց զոհողությունն իմաստավորված է. նրանք զոհվեցին համուն Արցախի ազատության եւ անվտանգության, հանուն հայոց արժանապատվության:

Սիսական ջոկատի մարտիկների զոհողության մեջ այն իմաստն է, ինչ իմաստ ունեցել է մեր ժողովուրդը՝ իր լինելիության համար դարեր շարունակ հարատեւելով պայքարում:

Հիրավի, ավելի մեծ երջանկություն չկա, քան հայրենիքին անմնացորդ նվիրվելու ու ծառայելը: Մեր տղաները նահատակվեցին հենց այդ ճանապարհին:

Ամոթ մեզ բոլորիս, եթե նման բազում նահատակների օրինակով չենք իրականացնելու մեր նվիրական ծառայությունը Արցախի հերթական ոտնձգության դեպքում:

Եթե Արցախյան մոր լկտիություն թույլ տա, կհետեւի մեր ուժգին եւ ջախջախիչ հակահարվածը: Ապրիլյան իրադարձություններից հետո, նաեւ այս պահին, մենք զբաղված ենք անհրաժեշտ աշխատանքների իրականացմամբ: Մենք պատրաստվում ենք...

...Չկա Արցախյան հիմնախնդիր. դա ավելի շատ մտացածին արտահայտություն է, որ շրջանառում ենք նաեւ մենք: Իրականում, մինչդեռ, ունենք ոչ թե Արցախյան հիմնախնդիր, այլ հայկական հիմնախնդիր»:

* * *

Խաչքարի բացման արարողության ժամանակ գնահատանքի խոսքեր հնչեցին Սիսական ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանի մասին, ինչը տեղին էր ու պատշաճ: Նրա մտքի ու ջանքի արդյունքն էր այդ խաչքարը: Նրա նախաձեռնությամբ էր, որ Սիսիանի պանթեոնում բարեկարգվեցին ապրիլյան պատերազմում զոհված սիսիանցիների շիրմերը, որից հետո ձեռնամուխ եղավ զոհված մարտական ընկերների հիշատակը Թալիշում հավերժացնող խաչքարի բացման արարողության ժամանակ, ինչպես ասացիք, ելույթ ունեցավ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Նախագահը ելույթ ունեցավ նաեւ Թալիշ ժամանած հյուրերի ընդունելության ժամանակ:

Երկու ելույթն էլ հետաքրքիր էին եւ առանձնակի ուշադրության արժանի: Ահա մի հատված նախագահի խոսքից. «Այսօրվա արարողությունը

ժացնելու գործին:

Հոկտեմբերի 29-ի արարողության կազմակերպիչն էլ, ԼՂՀ ՊԲ հրամանատարության հետ, ինքն էր:

Միջոցառմանը Սիսականի հրամանատարը եկել էր ընտանիքով: Նաեւ կրտսեր որդուն՝ մեկ ու կես տարեկան Հրանտին էր թալիչ բերել:

* * *

Հանդիսավոր արարողության ժամանակ, հատկապես ԼՂՀ ներկայացուցիչների ելույթներում, քանիցս երախտագիտության խոսքեր ասվեցին Այունյաց աշխարհի, սյունեցիների հասցեին: Կարեւորվեց Արցախ-Այունիք առանձնահատուկ համագործակցությունը, պատմության բոլոր փուլերում երկու տարածաշրջանի դերակատարությունը հայոց պետականության կառուցման, հայոց ինքնիշխանության պահպանման գործում:

Եվ այդ խոսքերն անկեղծ էին ու բնական. Այունիքն ու Արցախը ոչ միայն ժողովրդագրական սերտ կապերով են միահյուսված, այլև պատմական ճակատագրով, աշխարհագրական դիրքով: Պատահական չէ, որ օրհասական ժամերին Այունիքն ու Արցախը նեցուկ են եղել միմյանց: Այդպես եղավ նաև ապրիլյան պատերազմի ժամանակ:

Իսկ Այունիքի եւ Արցախի պատմական կապի ու արյունակցության մասին են վկայում եւ Պատմահայրը, եւ Այունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Միայն Ստեփանոս պատմիչի մի վկայություն՝ Սիսական տոհմի, ինչպես եւ Արցախի իշխանական տան նահապետության սկզբնավորման մասին՝ սահմանված Հայոց թագավոր Վաղարշակի կողմից. «...Արեւելյան կողմից սահմանված է մեծ եւ առաջին՝ Սիսական տոհմի նահապետությունը: Այս նահապետության առաջին (նահապետի) անունը Սիսակ էր: Իսկ սրանց սերնդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու քաղցրաբարո մարդու՝ Եռան (Առան) անունով, նահապետ է կարգում Առանն մեծ դաշտի վրա՝ Երասխից մինչեւ Հունարակերտ: Եվ քաղցր բարբի պատճառով նրան Աղու էին կանչում, որտեղից էլ աշխարհը նրա անունով Աղվանք կոչվեց» (Այունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 73):

Այդպես են Աստուծո կամոք ասպարեզ իջել հայոց Այունիքն ու Արցախը: Ու միասին անցել հազարամյակների կեանքներով: Ու դեռ պիտի անցնեն, քանզի հայոց ճանապարհը հավերժ ճանապարհն է:

Իսկ դա նեթաբարում է նաև՝ առաջին հայաքսից մարք թվացող քայլեր: Ասենք՝ թալիչի վերաբնակեցումը (եթե, իհարկե, դա կարելի է մարդ հարց համարել):

Առաջնագծից այսօր մոտ երեք կմ հեռավորությամբ գտնվող գյուղը, ըստ համայնքի ղեկավար Վիլեն Պետրոսյանի, ամվտագության երաշխիքներ է ուզում միայն: Եվ բնակիչների մեծ մասը կվերադառնա այդ դեպքում. ապրիլյան պատերազմից առաջ գյուղում 125 ընտանիք էր ապրում՝ մոտ 500 մշտական բնակչով, նաև ժամանակավոր բնակիչներ կային:

Արցախյան առաջին պատերազմի ընթացքում թալիչիները մեկ անգամ արդեն արժանապատվորեն դուրս են եկել ավելի վատթար կացությունից: Գյուղը մոտ երկու տարի (1992թ. հունիսի 16-ից մինչեւ 1994-ի ապրիլի 14-ը) ադրբեջանական զորքան մեջ էր, բայց ազատագրվեց ու նոր կյանք սկսեց:

Այսօր էլ թալիչում պետք է ապրեն հայն ու հայրենից: Դա նաև Սիսական ջոկատի նահատակ զինվորների անմեռ հոգիների պատվիրան-հրամանն է...

ՍԱՍՎԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳՈՒՄԱՐՄԱՆ ԲԱՌՈՐԴ ՂԲԱՐՐ

Հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ Կապանի եւ սահմանամերձ գյուղերի անվտանգության ապահովմանն առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ ՀՀ ներքին գործերի նախարարության Կապանի պահպանության բաժնի այլընտրանքային գումարտակը: Որոշակի մարտական պատրաստություն անցնելուց հետո 1991-ի դեկտեմբերի սկզբին ներգրավվեց Կապանի տարածաշրջանի սահմանների պաշտպանության, իսկ 1992-ի ապրիլի 24-ից՝ մարտական գործողությունների մեջ:

Նոյեմբերի 5-ին լրացավ նրա հիմնադրման 25-րդ տարեդարձը, որին նվիրված միջոցառումների շարքը սկսվեց Կապանի ոստիկանության բակից: Հանդիսությանը մասնակցում էին գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը, ՀՀ ոստիկանության Այունիքի մարզային վարչության պետ, գնդապետ Արշավիր Գեղորգյանը, Կապանի ոստիկանության պետ, գնդապետ Արթուր Շնավոնյանը, ոստիկանության Կապանի պահպանության բաժնի պետ, փոխգնդապետ Արտաշես Մարտիրոսյանը, գումարտակի նախկին մարտիկներ, զոհվածների ծնողներ, հարազատներ: Ներկայից ծառայողներ դրեցին ոստիկանության բակում տեղադրված գումարտակի չորս զոհված մարտիկների՝ Նորայր Դուկասյանի, Վահրամ Մարտիրոսյանի, Գրիգոր Մնացականյանի, Ալբերտ



Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշաքարին: Այնուհետև միջոցառման մասնակիցները եղան Բաղաբուրջի հուշահամալիրում եւ հարգանքի տուրք մատուցեցին պատերազմի զոհերի հիշատակին: Ժամը 13-ին Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ գումարտակի ստեղծման 25-ամյակին նվիրված հանդիսություն: Ներկայից մեկ րոպե լռությամբ հարգեցին զոհված մարտիկների հիշատակը: Գումարտակի մարտական ուղին ներկայացրեց Այունիքի տարածաշրջանային պետական քոլեջի փոխտնօրեն Վրեծ Բաղալյանը: Արժանին մատուցվեց գումարտակի հիմնադիր հրամանատար, Կապանի ՆԳ բաժնի պահպանության բաժնի պետ, գնդապետ Օճիկ Ստեփանյանին:

Գումարտակի առաջին վաշտի հրամանատար, այժմ Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեւոնիդ Գրիգորյանն իր խոսքում ներկայացրեց այն դժվարությունները, որոնք հաղթահարելով ստեղծվեց ստորաբաժանումը, նաև այն ավանդը, որ ունեցավ Կապանի սահմանամերձ բնակավայրերի պաշտպանության գործում: Բանախոսը պատվոգրեր հանձնեց գումարտակի մի խումբ նախկին մարտիկների, ծառայողների՝ զոհվածների մայրերին: Մերօրյա պատերազմում գու-

մարտակի նշանակությունը, որպես նորանկախ Հայաստանի առաջին կանոնավոր զորամիավորում, իրենց ելույթներում արժեւորեցին Այունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադեոսյանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Լեւոնիկ Պետրոսյանը: Վերջում Ալ.Շիրվանզադեի անվան պետաթատրոնի դերասանները հանդես եկան Կառլոս Եղիազարյանի «Գարեգին Նժդեհ» բեմադրությամբ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ուղեվարձի բարձրացման վերաբերյալ Կապանի համայնքապետարանը դիրքորոշում է հայտնել

Վերջերս մամուլում եւ սոցիալական ցանցերում քննարկվող թեմաներից է Կապանի ավտոբուսային 8 համարի երթուղու սակագինը նոյեմբերի 1-ից 20 դրամով բարձրացումը: Այդ մասին Ազգային ժողովում հայտարարությամբ հանդես է եկել պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: Նոյեմբերի 23-ին «Այունյաց երկիր» թերթի խմբագրություն էին այցելել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Կապանի տարածքային կազմակերպության անդամներ Նարեկ Ղահրամանյանը եւ Արմեն Հովհաննիսյանը, ովքեր իրենց բացատրություններով որոշակիորեն ներկայացրին խնդրո առարկան:

Արմեն Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ նոյեմբերի 2-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակ է եկել Շինարարների փողոցում բնակվող մարդկանց մի խումբ եւ բողոքել, որ իրենց թաղամասը սպասարկող ավտոբուսի ուղեվարձը բարձրացել է 40 տոկոսով, ինչը հարուցել է բնակչության բողոքը, եւ խնդրել են իրենց, որ օգնեն ավտոբուսի ուղեվարձի կարգավորման խնդրում: «Գիտակցում ենք, որ կարող են լինել լրացուցիչ ինչ-ինչ ծախսեր, որ տեղի գործը շահած կազմակերպությունն այդ գումով պիտի շահագործի, - այդ ամենը հասկանալի է, բայց աշխատավարձերը չեն բարձրացել, նույնը՝

նպաստները, թոշակները: Ձմռան չեմին ենք, իսկ այդ եղանակին հոգսեր չառանում են: Դա շատ մեծ բեռ է ժողովրդի ուսերին, ու այդ բեռի հետ մեկտեղ ուղեվարձը բարձրացնում են 40 տոկոսով ու բնակչությանը փակուղու առջեւ կանգնեցնում. կամ վճարում են 70 դրամ, կամ չեն օգտվում ավտոբուսից: Իսկ քաղաքից կտրված այդ թաղամասի մարդիկ մեկ անգամ չէ, որ օրվա ընթացքում օգտվում են ավտոբուսից: Այդ քսան դրամներն ամսվա կտրվածքով շոշափելի գումար են կազմում: 23 օր է՝ այդ դժգոհությունը կա: Այդքան ժամանակ այդ մասին տեղյակ են քաղաքապետարանում»:

Տղաները նաև տեղեկացրին, որ եղել են Շինարարների թաղամասում, գրուցել բնակչության հետ, ովքեր դիմում-բողոք են գրել, եւ կազմակերպվել է ստորագրահավաք, մոտ հինգ հարյուր ստորագրություն է հավաքվել, ինչը թույլ է տալիս հարցը Կապանի ավագանու նիստի օրակարգ մտցնել, մասնավոր որ դիմում-բողոքի պատճենը ներկայացվել է համայնքապետին: Վարչապետի օգնականն էլ տեղյակ է պահել դիմում-բողոքի ստացման մասին:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները, բացի ստորագրահավաքից, նաև բողոքի ակցիա են կազմակերպել: Երբ ավտոբուսից օգտվողներն ավտոբուս էին բարձրանում, նրանք հորդորում էին վճարել 50 դրամ: «Փորձեցին տարբեր ճանապարհներով մեզ ճնշել, չկարո-

ղացան, այս առավոտյան (նոյեմբերի 23-ին, խմբ.), 10:30-ին Շինարարների թաղամաս բարձրացավ «Լավ ընկեր» ՄՊ ընկերության տնօրենը, կարգադրեց վարորդին՝ ավտոբուսը չաշխատեցնել, մինչեւ չվճարեն 70 դրամ: Մի քանի ուղերթեր ավտոբուսը չաշխատեց, 14:30-ին նոր միայն ավտոբուս գիծ դուրս եկավ 70 դրամով: Ըստ իս՝ դրամով էլ մեր բնակչությանը հուզող սոցիալական հարցը փակուղի մտավ»:

Տղաները փոխանցեցին, որ իրենք չգիտեն՝ հարցն ինչպես կլուծվի: Նաև պատրաստական են կանգնել մինչեւ վերջ՝ խնդրին դրական լուծում տալու համար: Եվ ամենակարևորն այն է, որ տրամապետի ուղեվարձը, ինչպես տրամաբանությունն է հուշում, պիտի լինի 50 դրամ, ինչպես նախկինում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Հ.Գ. Նյութը պատրաստ էր տպագրության, երբ տարածվեց Կապանի քաղաքապետի մամուլի հարդորագրությունը, որը ներկայացնում է ներ ստորեւ՝

2016թ. նոյեմբերի 17-ին Կապանի համայնքապետարանում տեղի է ունեցել Կապան համայնքի ղեկավարի 2016թ. նոյեմբերի 11-ի թիվ 135-Ա կարգադրությամբ ստեղծված «Կապան համայնքի վարչական սահմաններում թիվ 8 ավտոբուսային երթուղու ուղեվարձի փոփոխության ֆինանսատնտեսական հիմքերը ուսումնասիրող աշխատանքային հանձնախմբի» ամփոփիչ միտքը:

Խորհրդակցության ընթացքում աշխատանքային խմբի անդամներին ներկայացվեց 2016թ. սեպտեմբերի 26-ին Կապան համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների միջեւ կայացած մրցույթի ընթացքում հաղթող «Լավ ընկեր» ՄՊԸ-ի ներկայացրած՝ մեկ ուղևորի փոխադրման գնին վերաբերող հաշվարկը: Խորհրդակցության ընդհանուր աշխատանքային խմբի անդամներն իրականացրել են թիվ 8 երթուղու մեկ ուղևորի փոխադրման ընթացիկ գնի հաշվարկի համար ամհրաժեշտ ուսումնասիրություններ, ուղևորափոխադրումների ծավալի եւ ուղևարձի գնագոյացման մոնիտորինգ:

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում աշխատանքային խումբը եկավ միակարծիք այն եզրակացության, որ «Լավ ընկեր» ՄՊԸ-ի ներկայացրած 70 դրամ ուղևարձի գինը համապատասխանում է եկամտաբերության ողջամիտ մակարդակին, որը թույլ է տալիս ունենալ տեխնիկական սարքին ավտոտրանսպորտային միջոցներ՝ առավել անվտանգ ուղևորափոխադրման ապահովման նպատակով:

Աշխատանքային խմբի անդամներն անդրադարձան նաև Վաչագան եւ Բաղաբուրջ թաղամասերի երթուղայինների ուղեվարձերի չափին, որը Կապան համայնքի ղեկավարի առաջարկությամբ այս տարվա նոյեմբերի 1-ից «Լավ ընկեր» ընկերության կողմից նվազեցվել է 50 դրամով եւ ներկայումս 100 դրամ է:

Աշխատանքային հանձնախմբի կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է Կապան համայնքի ղեկավարին եւ ՀՀ Այունիքի մարզպետարան:



Աննախադեպ հողաթափում Մ-2 ավտոմայրուղու գործիսյան հափվածում

Նոյեմբերի 20-ին՝ առավոտյան ժամը 6-ի սահմաններում, աննախադեպ ծավալի հողաթափում է եղել Մ-2 ավտոմայրուղու (Երեւան-Երասխ-Գորիս-Սեղրի-Իրանի պետական սահման) 247,5 կիլոմետրի վրա (Գորիս քաղաքի մերձակայքում գտնվող «Ծակեր» անվանյալ վայրում)։ Հողային զանգվածի հետ նաեւ խոշոր քարաբեկորներ են թափվել։ Դրա հետևանքով մոտ մեկ ժամ փակվել էր մայրուղին։

Ժամը 7-ի դրությամբ Գորիսի «Ունար» ՍՊ ընկերությունը (գործադիր տնօրեն՝ Արթուր Մարտիրոսյան) ձեռնամուխ է եղել ճանապարհի հողային զանգվածը տեղափոխելու աշխատանքներին՝ ներգրավելով երկու մեքենա եւ երեք էքսկավատոր։

Ժամը 9-ին արդեն բաց էր մայրուղին, ինչը հնարավորություն տվեց նախ՝ միակողմանի, իսկ ժամը 12-ին՝ երկկողմանի վերականգնել երթուղիները։

– Հողային զանգվածի եւ քարերի թափումը լեռնային մեր ճանապարհներին հաճախ է տեղի ունենում հատկապես զարմանալիս

ու աշնանային անձրևների, ծնիալքի ժամանակ, բայց նման ծավալի հողաթափումն աննախադեպ էր, – «Այունյաց երկրի» լրագրողին ասաց «Ունար» ՍՊԸ գործադիր տնօրեն Արթուր Մարտիրոսյանը։ – Մոտ 150 խորանարդ մետր հողային զանգված ենք տեղափոխել, իսկ չորս խոշոր քարաբեկոր երթուղիի գոտուց հեռացրել ենք՝ հետագայում տեղափոխելու նպատակով, քանի որ դրանք տեղում պայթեցնել չէինք կարող՝ կողքի ժայռերից նոր քարաթափում եւ հողաթափում չհարուցելու համար»։

Ըստ Արթուր Մարտիրոսյանի՝ նման իրավիճակները լեռնային մեր ճանապարհներին անխուսափելի են։ Պարզապես պետք է պատրաստ լինել արագ արձագանքման։

Ինչ վերաբերում է հիմնահարցի արմատական լուծմանը, ապա դա աներեւակայելի մեծ ծախսեր է պահանջում, քանի որ միայն Այունյացի մարզում նման ճանապարհները մի քանի տասնյակ կիլոմետրի են հասնում։

Սեփ. Լրատվություն

Քննարկվեցին Հյուսիս-հարավ ճանապարհի Արտաշատ-Քաջարան հափվածի փոխնկարներն ուսումնասիրության արդյունքները

Ամիսներ առաջ Այունյացի մարզպետարանում «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի պատասխանատուները ներկայացրել էին Արտաշատ-Քաջարան հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքները։ Նոյեմբերի 18-ին մարզպետարանում կայացած հանդիպման առարկան Սիսիան-Քաջարան հատվածի նախնական նախագծման քննարկումն էր եւ այն բոլոր տեխնիկական լուծումները, որոնք նախնական նախագծով առաջարկվում են։

Քննարկմանը, որին մասնակցում էին մարզպետարանի աշխատակիցներ, համայնքների ղեկավարներ, բնակահայրության ոլորտի ներկայացուցիչներ, նշվեց, որ «Հյուսիս-հարավ» ճանապարհի Սիսիան-Քաջարան 60 կիլոմետրանոց հատվածը մայրուղու ամենաբարդն է իր տեխնիկատնտեսական լուծումներով, այն սկսվում է Սիսիանի արեւելյան մուտքից, ավարտվում Լեռնաձորի համայնք չհասած, նախնական հաշվարկներով՝ ճանապարհի կառուցման համար կծախսվի մոտ 800 մլն դոլար։ Գնահատվում է մի համայնքով չի անցնի, այդ թվում Գորիսով եւ Կապանով։ Առաջին կարգի տեխնիկական նորմերով նախատեսված ճանապարհ է, որում կարելի է զարգացնել 100 կմ/ժամ արագություն։ Գնահատվում անցնում է լեռնային բարդ տեղանքով, ներառում 27 մեծ ու փոքր կամուրջ, ութ թունել, ավելի ստույգ 60 կիլոմետրից 18-ը կամուրջ ու թունել է, ընդ որում՝ թունելներից մեկն ութ կիլոմետր է։ Բացի այդ ճանապարհի տարբեր հատվածներում 75 տեղում կկառուցվեն հեռավար, 16,5 մետր լայնություն ունեցող ճանապարհի 11,1 մետրը կլինի ասֆալտապատ։ Նախատեսված են նաեւ հանգույցներ (երեքը՝ խոշոր), որ համայնքները միմյանց նոր կառուցվող առաջին կարգի ճանապարհին։ Գնահատվում անվտանգության նորմերը, միջազգային չափանիշներին համապատասխան, ապահովված են։

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպումը եւ իրականացման փուլերը։



Քննարկմանը մասնակից համայնքների ղեկավարներին մասնավորապես հետաքրքրում էին հողերի օտարման եւ փոխհատուցման հարցերը։

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպումը ստեղծված է Քաջարանի վերականգնման մասնագետ Սոնա Պողոսյանը նշեց Սիսիան-Քաջարան միջանցքի կառուցման գործերով։

Սիսիան-Քաջարան ճանապարհի նախագծի վերջնական տարբերակը պատրաստ կլինի զարմանքով։

Քաջարան ճանապարհահատվածում ազդեցության ենթակա համայնքները՝ Իշխանասար, Ույծ, Աղիտու, Նորավան, Վաղատին, Որոտան, Դարբաս, Գետաթաղ, Լոր, Շենթաթաղ, Գեղի, Լեռնաձոր, հավելելով, որ ընդհանուր առմամբ 547 միավոր հողատարածք, ըստ նախնական գնահատման, ազդեցության տակ են, որից 245-ը մասնավոր սեփականության հողեր են, 234-ը համայնքային սեփականության, որոշ հողատարածքների պատկանելությունը դեռ պարզված չէ։ Օտարվող հողատարածքների ընդհանուր մակերեսը 3



միլիոն 249 հազար քառակուսի մետր է, որից 2 միլիոն 268 հազար 115 քառակուսի մետրով՝ գյուղատնտեսական նշանակության։ Բանախոսը ներկայացրեց հողօտարման ծրագրի հիմնական սկզբունքները եւ իրականացման փուլերը։

Սիսիան-Քաջարան ճանապարհի նախագծի վերջնական տարբերակը պատրաստ կլինի զարմանքով։

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Եղիցի խաղաղություն կամ «...ինքը՝ մահը, կյանքի շարունակությունն է...»

Սիսիանի Ն.Ադոնցի անվան պատմության թանգարանում տեղի ունեցավ «Ապրողներն են հիմա լոկ պատասխան տալիս...» վերտառությամբ միջոցառմանը, որը կազմակերպել էր թանգարանը, հանձին տնօրենի՝ Ծովինար Պետրոսյանի։ Միջոցառումը հետապնդում էր մեկ նպատակ՝ գրուցել, կիսել նրանց վիշտը, ովքեր, ավա՞ղ, դարձել էին սգավոր, դարձել չարամիտ, նենգ թշնամու որոգայթների զոհերի հարազատներ...

– Թանգարան մտք, ինչպես եկեղեցի, – հորդոր-խնդրանքով ներկաներին դիմեց տիկին Ծ.Պետրոսյանը, – բանգի կյանքը համակ հանրություն է, եւ եթե ուզում եք ապրել մեր հողի վրա, պետք է պատրաստ լինե՛լ ամեն անակնկալի, պետք է կռվել ապրելու համար։ Չարմանալի է, բայց փաստ, սովորական ապրելը վաստակելու համար պետք է կռվել...

Ապրելու կերպի մասին էի որոշել խոսել, գրուցել, որպեսզի զոհվածների հարազատներն իմանան, որ մեղավոր չեն ոչ զոհվածները, ոչ կռվից ողջ վերադարձածները։ Չամաչենք ոչ կորուստ ունենալու, ոչ ողջ մնալու համար։ Սովորենք կարեկցել, մեղմել ցավը, կիսել վիշտը, ու թե հարկ է՝ կառուցենք հուշարձաններ, քանի որ քարը ցավից երկար է ապրում։

Այնուհետեւ Արցախյան գոյամարտի բոլոր տարիների պատահիկները ներկայացրեց տեսանյութ Թալիշուն զոհված սիսիանցիների պատվին կառուցած հուշարձանի բացման արարողությունից։

Յուրաքանչյուր բացելուց առաջ ներկաների ուշադրությանը ներկայացվեց տեսանյութ Թալիշուն զոհված սիսիանցիների պատվին կառուցած հուշարձանի բացման արարողությունից։

Այնուհետեւ Արցախյան գոյամարտի բոլոր տարիների պատահիկները ներկայացրեց տեսանյութ Թալիշուն զոհված սիսիանցիների պատվին կառուցած հուշարձանի բացման արարողությունից։

Եղիցի խաղաղություն կամ «...ինքը՝ մահը, կյանքի շարունակությունն է...»

ԿԵԼԵՆԱ ԹԱՆԵԿՈՍՅԱՆ

Վաղաժամ մահով շար գործեր անավարտ մնացին

Նոյեմբերի 7-ին՝ երկու տասնամյակ առաջ, երկրային կյանքին հրաժեշտ տվեց քանդակագործ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ Մարատ Նուրիջանյանը, նախախնամությունը նրան 55 տարվա կյանք էր բաշխել, բայց մնալուց հետո թողեց Կապանի մշակութային կյանքում: Քաղաքի առաջին բարձրագույն կրթություն ստացած քանդակագործն էր, ասել է թե՛ առաջին պրոֆեսիոնալ քանդակագործը: Անժամանակ հեռացավ, բայց շարունակում է ապրել իր ստեղծագործություններում. ի վերուստ այդպիսի ճակատագիր է նախասահմանված ճշմարիտ արվեստագետի համար...



տիվ պաշտպան Սոս Նուրիջանյանի արձանը, 1974-ին Կապանի բժշկական ուսումնարանի ճեմասրահում «Չավերծություն» քանդակը: Նրա ստեղծագործություններից է «Գանձասարի բանալին» քանդակը, կամ, ինչպես ժողովուրդն է ասում, «Արջը»: 1978-ին Կապանի կենտրոնում վեր է խոյացել «Դավիթ Բեկ» մոնումենտալ ձիարձանը, որ ստեղծել է իր դասախոս եւ ուսուցիչ, հանրապետության ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանի հետ: Ունի նաեւ այլ՝ «Մերկ կնոջ ֆիգուրը», «Շատրվանը», «Հանքափորը» աշխատանքներ: Նրա մատնահետքերը կան Երեւանում տեղադրված Արա Չարությունյանի «Սայաթ-Նովա» արքայուր-քանդակի վրա, կոմպոզիցիան ներառում է հարթաքանդակ՝ հեզանկուն հայուհիների տեսքով, որը նույնպես Մարատի ձեռքի գործն է: Կապանում Սպիտակյան երկրաշարժի զոհերի հիշատակին կանգնեցվելիք կոթողի համար հայտարարված մրցույթում, որին մաս-

նակցում էին տեղացի արվեստագետներ, լավագույնը ճանաչվեց նրա աշխատանքը, որ մրցույթի ժամանակ ցուցադրվեց «Ձանգ» պայմանական անունով: Վաղաժոր տեսքով եռակողմ կոմպոզիցիան մարմնավորում էր հայ ժողովրդի հոգեւոր խռովքը: Ճարտարապետական հետաքրքիր լուծում էր գտնվել. հուշարձանը պիտի տեղադրվեր Հայաստանի խորհրդանշական քարտեզը պատկերող պատվանդանի վրա՝ այն տեղում, որտեղ երկրաշարժից պատուհասած Հայաստանի հյուսիսային շրջաններն են: Բայց...

Վաղաժամ մահով արվեստագետի բազում մտադրացուններ անավարտ մնացին: Սկսել էր կերտել Ջորավար Անդրանիկի հուշարձանը, չավարտեց նաեւ Գարեգին Նժդեհի արձանը: Հայրենիքի նվիրյալների մանրաքանդակներն այսօր պահվում են հայրական տան մի անկյունում՝ որպես քանկագին մասունքներ: Նաեւ նախաձեռնել էր մեթոդային ազատամարտում զոհված կապանցի ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու գործը քանդակի լեզվով, քանդակներ ստեղծեց, ծրագրածի մի մասն էլ անկատար մնաց...

Գոնե լավ է, որ նրա գործն ու վաստակն անցկատ չմնացին: 2014 թվականի հոկտեմբերի 18-ին Մարատ Նուրիջանյանը մշակույթի բնագավառում ունեցած մեծ ավանդի ու վաստակի համար (հետմահու) պարգևատրվել է «Կապան» ոսկե մեդալով:

«Արտակարգ մարդ էր Մարատը, որպես քանդակագործ շատ լավ էր, շատ սուր աչք ուներ, քանդակի հիմնականայնքը, որ արդեն պատրաստ էր լինում, նրա դասախոսը՝ հանրապետության ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանը, ասում էր՝ Մարատը կարող է էլ չհարունակի, քանակը պատրաստ է, ստեղծագործական հաջողությունն ապահովված է: Իսկ առօրյա կյանքում ընկերասեր էր, ընկերոջ համար կյանք տվող, ուրախության, թե տխրության պահին առաջինը նրա կողքին կանգնող, մեցուկ եղող: Մենք նրանից ահագին ջանք էինք եթե կարիքի մեջ էինք լինում, մի քանի րոպե հետո մեր կողքին էր լինում:



Հունորով, մարդկանց հանդեպ ջերմ վերաբերմունքով բոլորից տարբերվում էր: Կողորտային մարդ էր Մարատը, ուղղակի ախտա, որ վաղ հեռացավ կյանքից: Մասնավոր շատ գործեր ուներ ավարտին հասցնելու, նրա ստեղծած հարյուրավոր էքզիզներ այդպես էլ մնացին որպես էքզիզներ», - իր արվեստագետ ավագ ընկերոջ մասին մտորումները ներկայացրեց գեղանկարիչ Վահրամ Խաչատրյանը: Նաեւ ավելացրեց, որ նրա արվեստանոցը հավաքատեղի էր կապանցի քանդակագործների եւ գեղանկարիչների համար, ովքեր այդտեղ նախնական մկրտություն, արվեստի հանդեպ սեր են ստացել: Այսօր նրա ստեղծագործական ջիղը շարունակվում է թռուճուճուճ Արիսա Գրիգորյանի մեջ, ով գերազանցությամբ ավարտել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի բաժինը: Ինքն ու ամուսինը՝ քանդակագործ Տիգրան Մուրադյանը, կերտել են պապիկի՝ Մարատ Նուրիջանյանի

քանդակը: Սակայն այն տեղադրելու հարցը ցայսօր չի լուծվել... Ցանկալի կլինի, որ տեղադրվի Կապանի արվեստի պետական թուեջի շրջակայքում:

...Արվեստագետի մեծությունն այն է, որ նրա գործերը խորհրդանշալի արժեք են ունենում: Վերջերս մի լուսազարավ փաստի տեղեկացանք. ուսումնասիրվել են գրեթե բոլոր երկրների ֆուտբոլային թիմերի լուգները, եւ լավագույնների թվում է Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբում հանդես եկող Կապանի «Գանձասար-Կապանի» տարբերանշանը. Գանձասարի արջը՝ բանալին բերանին (Մարատի քանդակն է) կանգնած է ֆուտբոլային գնդակի վրա: «Քիչ տարբերանշաններ կան, որոնք ավելի էպիկական են, քան Հայաստանի բարձրագույն խմբի այս թիմին», - սա այն տարբերանշանն է, որ մենք ուզում ենք տեսնել», - գրել են հեղինակավոր պարբերականի մասնագետները:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մարդը, մանկավարժն ու քաղաքացին

2016թ. դեկտեմբերի 2-ին Ռաֆիկ Սաշայանը դառնում է 80 տարեկան



Մանկությունից ի վեր՝ մինչեւ այժմ, սերտորեն կապված է եղել ծննդավայրի, գյուղի, դպրոցականների եւ ուսուցիչների հետ: Այս աշխատասիրությամբ ու մարդկային արժանավայել վերաբերմունքով ճանաչում գտել ամենուր, որտեղ աշխատել է...

կյանքի ակտիվ շրջանը: Գյուղի մշակույթի գործը դրել է բարձր հիմքերի վրա՝ երիտասարդությանը ներգրավելով ակունքի աշխատանքներում: Հատկապես ուշագրավ են եղել ակունքի ինքնագործ խմբերի ելույթները՝ համերգները, թատրոնները, հարց ու պատասխանի երեկոները եւ այլն: Ինքնագործ խմբերը հաճախ են ելույթներ ունեցել շրջանի գյուղերի եւ Գորիս քաղաքի դահլիճներում:

1958թ. նրա կողմից ստեղծվել է երիտասարդական բրիգադ, որի կողմից երկու հեկտար մշակովի հողատարածության վրա ցանվել է եգիպտացորեն՝ այդ ժամանակների համար առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բրիգադը Ռ.Սաշայանի ղեկավարությամբ ստացել է ռեկրոդային բերք: Շրջանի ղեկավարությունից բացի, այդ մասին իմանում են Հայաստանի կոմերտմիության եւ ՀամԼԿԵՄ կենտկոմները: ՀամԼԿԵՄ կենտկոմի առաջին քարտուղար Պավլովի կողմից Ռաֆիկ Սաշայանն արժանանում է պատվոգրի:

1960թ. Կյուրու գյուղի դպրոցի դիրեկտոր (տնօրեն) երջանակահիշատակ Գրիշա Մանուչարյանի միջ-

նորությամբ Ռաֆիկ Սաշայանն աշխատանքի է նշանակվում գյուղի դպրոցում՝ ուսուցիչ: Դպրոցի ուսուցիչները եւ աշակերտներն ուրախությամբ են ընդունում նոր ուսուցիչին:

Ռաֆիկ Սաշայանը դասավանդում է պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն առարկաները՝ մասնագետներ չլինելու պատճառով:

Կարճ ժամանակում Ռաֆիկ Սաշայանը տիրապետում է դասավանդման, դաստիարակության մեթոդներին՝ հիմքում դնելով սերը երեխաների հանդեպ եւ ինքնակրթությունը:

Աշխատանքի հանդեպ ունեցած սերը, աշակերտների նկատմամբ հարգանքը վստահություն ու պարգե են բերում նրան: 1965թ. առաջին անգամ մասնակցում է մանկավարժական ընթերցումների: Գնահատվում է նրա բանիմաց ընթերցումը, եւ արժանանում է առաջին կարգի դիպլոմի ու պատվոգրի:

1973-74թթ. ուսումնական տարին Հարթաշենում սկսվում է գյուղի նորակառույց միջնակարգ դպրոցում: Ուրախ էին գյուղի համայնքը, ուսուցիչներն եւ աշակերտները: Ուրախ էր Ռաֆիկ Սաշայանը: Մանկավարժությունը դառնում է իր սիրած ու հիմնական գործը...

Ռաֆիկ Սաշայանը սերտորեն կապված է եղել հասարակական աշխատանքների հետ, եղել է դպրոցի արհմիության նախագահը,

պատանի բնասերների ղեկավարը: Գորիսում անցկացվող գյուղատնտեսական մթերքների ցուցահանդեսում ուսանելի է դարձել Հարթաշեն գյուղի պատանի բնասերների աճեցրած ծակնդեղի բերքը:

Որպես մարդ ու մանկավարժ ուրախ պահեր շատ է ապրել: Դրանցից առանձնացնում է երկուսը: Առաջինը՝ չի մոռանում 1971թ. փետրվարի 14-ը, երբ Կիրովականի (Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանից ստացել է բարձրագույն կրթության դիպլոմը՝ որպես պատմության ուսուցիչ:

Երկրորդ պահը եղել է այն, որ լուսավորության նախարարության կողմից արժանացել է ավագ ուսուցչի կոչման՝ 1986 թվականին՝ 50-ամյակի կապակցությամբ:

Նույնիսկ թոշակի անցնելուց հետո կապված է դպրոցի հետ: Պատասխանում է աշակերտներին հուզող հարցերին: Միշտ ներկա է լինում դպրոցի առաջին եւ վերջին զանգերին:

Մեր ընկերն ու բարեկամը գիտելիքների իր պաշարն այսօր էլ փոխանցում է համապատասխան երեխաներին:

Նրան՝ քաջառողջություն եւ խաղաղ ծերություն:

Ծնունդը շնորհավոր, մեծարգո Ռաֆիկ Սաշայան:

ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅԱՆ

